ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1957 Общественные науки

Ա. Գրիգորյանց

ԼԵՆԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լենայի դեպքերի վերաբերյալ առաջին հաղորդումը հայ մամուլում լույս տեսավ Ալեքսանդրապոլում հրատարակվող պրոգրեսիվ «Արաղած» թերթի 1912 թ. ապրիլի 22-ի համարում, որտեղ իրավացիորեն նշվում է, որ Լենայի բանվորների մասսայական գործադուլի պատճառը նրանց կյանքի ու աշխատանքի անչափ ծանր պայմաններն են։ Թերթը կոնկրետ տվյալներ է բերում բանվորների բնակարանների վիճակի, ընկերության խանութներում (նկատենք, որ ոսկեհանքերի տերիտորիայում առևտրական այլ կետեր չկային) վաճառվող սննդամթերքների բարձր գների մասին և այլն։ «Իսկ բանվորի օրական առավելագույն վաստակը,— նշված է մի թղթակցության մեջ,— հասնում էր 1 ռ. 30 կոպեկի»[1]։

Այդ նույն համարում «Վերջին լուրեր» վերնագրի տակ թերթը իր ընթերցողներին հայտնում է. «Պետերբուրգից հեռագրում են, որ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան (Պետական դումայի — Ա. Գ.) բանվորներից բազմաթիվ հեռագրեր է ստանում, որոնցում բողոք է հայտնվում Լենայի դժբախտությունների առթիվ»[2]։

Արտահայտելով առաջավոր հայ հասարակայնության կարծիքը, «Արաղած» թերթը «Վրդովված հասարակական խիղճը» խորագիրը կրող հոդվածում ընդգծում է, որ «Լենայի աղետը... իրենց նման, բայց ընչազուրկ մարդկանց բախտի հետ խաղացող ունևորների գալանային գրգռումների արդյունքն է։ Լենայի ջարդը մի ծանր մղձավանջ է, որից շատերին թվում է, որ իրենք արդեն ազատվել են։ Հեռագրական գործակալությունն իր պարտքը համարեց հայտարարել. թե կան «Մոտ 200 սպանված և նույնքան էլ վիրավոր»։ Պետական դուման հանդգնացավ նրանով, որ... թարմ շիրիմների առջև արտասանեց մի զույգ տաք ճառեր, թերթերն իրենց պարտքը կատարված համարեցին, տպագրելով հոդվածներ ու հաղորդագրություններ։ Իսկ Ներքին գործոց մինիստրը ժողովրդական ներկայացուցիչներին տվեց իր «Հռչակավոր» պատասխանը՝ «Այդպես եղել է, այդպես էլ կլինի...»։ Անմեղ զոհերին միայն մնում է ասել՝ «Հանգիստ ննջեցեք ձեր հավիտենական բնակարաններում, մենք ամեն ինչ արեցինք ինչպես ձեր բախտակից ընկերների, այնպես էլ ձեր թողած թշվառ որբերի համար»։ Բայց մի՞թե արդեն արված է այն ամենը, ինչ անհրաժեշտ է— հարցնում է թերթը,— մի՞թե Ներքին գործոց մինիստրը շարունակ ժողովրդին պետք է սարսափի մեջ պահի իր լկտի դարձվածքով՝ «Այդպես եղել է, այդպես էլ կլինի»։ Եվ կարծես ի պատասխան այդ հարցին, թերթը բազմաթիվ թվեր ու փաստեր է բերում պրոլետարիատի մասսայական գործադուլների մասին, որաես

[1] «Արաղած», № 30, 22 ապրիլի, 1912, ք. Ալեքսանդրապոլ։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, № 31, 26 ապրիլի, 1912։

ցարական դահիճների չարագործությունների դեմ ուղղված բողոքի նշան։ Սիստեմատիկորեն լուսաբանելով դեպքերի ընթացքը ոսկեհանքերում, «Արածգ»-ը մայիսի 6-ի իր համարում նշում է. «Պետական դումայի անդամ բոլշևիկ Պոլետաևը Բոդայբոյից ստացել է մի հեռագիր, որով հաղորդվում է հետևյալը. ոսկեհանքերում շարունակվում են խուզարկությունները, ձերբակալությունները ու բնակարաններից արտաքսելը։ Հեռագիրը վերջանում է հետևյալ խոսքերով՝ «Նորից պաշտպանություն ենք խնդրում։ Լենայի վարչությունը բնակելի տունը զիջել է բանտի համար։ Տունը հարմարեցվում է 180 կալանավորի համար»[1]։

«Արագած»-ը թանկ վճարեց Լենայի դեպքերի առթիվ ունեցած իր համարձակ ելույթների համար։ Հենց իր՝ Ներքին գործոց մինիստրության մամուլի գործերի Գլխավոր վարչության պետի պաշտոնակատար Կոմս Տատիշևի պընդումով Երևանի նահանգապետը թերթի խմբագիր Պետրոս Պողոսի Այվազյանին ենթարկեց դրամական տուգանքի 100 ռուբլու չափով, անվճարունակության դեպքում այն փոխարինելով մեկ ամսվա բանտարկությամբ»[2]։ Բայց, ինչպես հայտնում է թերթը, «նյութական միջոցների սղության պատճառով ընդունվեց վերջինը»[3]։

Արխիվային բազմաթիվ փաստաթղթերից և պարբերական մամուլի նյութերից երևում է, որ Լենայի ոսկեհանքերի անդեն բանվորների հետ տեսնված դաղանային դատաստանի լուրերն էլ ավելի ուժեղացրին քաղաքի և գյուղի հայ պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժումը։ Ինչպես ասված է ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեի անունից 1912 թ. ապրիլի վերջին Թիֆլիսում հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված «Կեցցե Մայիսի մեկը» պրոկլամացիայում, պրոլետարիատը հասկացավ, որ «լիբերալները ոռում և կեղծավորում են Նիկոլայ վերջինի առջև, երբ նրանք իրենց և ուրիշներին հավատացնում են, թե ինքնակալությունը... կարող է բավարարել ժողովրդի կյանքի պահանջները»[4], ընդհակառակը, պրոլետարիատն այժմ ավելի խորն է գիտակցում, որ ինքնակալությունը հանդես է գալիս բուրժուազիայի ու կալվածատերերի շահերի հավատարիմ պաշտպանի դերում և որ բանվոր դասակարգն ու չքավոր գյուղացիությունը ոչ մի բոլոր չպետք է դադարեցնեն պայքարը նրանց դեմ։ Ոչ թե «ցարական ողորմածությամբ», այլ միայն իր սեփական ուժերով աշխատավոր ժողովուրդը կարող է ազատվել բուրժուա-կալվածատիրական շահագործումից։ Կարծես որպես պատասխան դդ կոչին, մայիսի 11-ին գործադուլ հայտարարեցին Շուշու գավառի Զարդարաշենի Տեր-Մկրտչյան եղբայրներին պատկանող մետաքսագործարանի բանվորները։ Նրանք պահանջ ներկայացրին կառավարչին աշխատավարձը բարձրացնելու մասին։ Գործարանատերն սկզբում մերժեց բանվորների պահանջը, բայց գործադուլավորների համառությունը ստիպեց նրան զիջումներ անել։ Նա պաշտոնապես հայտարարեց, որ ներկայացված պահանջը կբավարարվի, և միայն դրանից հետո աշխատանքը գործարանում վերսկսվեց[5]։

---

[1] «Արագած» № 34, 6 մայիսի, 1912։

[2] ՍՍՌՄ ՊԿՊԱ Լենինգրադում, ֆ. 776, ց. 21, գ. 213, 1911—1912, էջ 6—7։

[3] «Արագած», № 42, 24 հունիսի, 1912։

[4] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 266, էջ 211։

[5] «Դարարագ» թերթ, № 38, 24 մայիսի, 1912, բ. Շուշի։

Արխիվային փաստաթղթերից և պարբերական մամուլի նյութերից երևում է, որ Լենայի դեպքերի առաջ բերած ռևոլյուցիոն հուզումներն ընդգրկել էին նաև Ալավերդու ու Ղափանի պղնձագործներին, Կարսի մարզի երկաթուղայիններին, Ալեքսանդրապոլի փայտամշակման արհեստանոցների և դերձականոցների բանվորներին։ Հայ բանվորները զայրույթով դատապարտում են Լենայի ոսկեհանքերի անպաշտպան բանվորների հետ դաժան դատաստան տեսած ցարական դահիճներին, ընդսմին ցուցաբերելով պրոլետարական ինտերնացիոնալ համերաշխության զգացմունք դեպի մյուս ազգությունների պրոլետարիատը և ամենից առաջ դեպի ռուսական առաջավոր բանվոր դասակարգը։ Դրա մասին ակնառու կերպով վկայում է այն նամակը, որ մի խումբ հայ բանվորներ 1912 թ. հուլիսի 10-ին ուղարկել են բոլշևիկյան «Պրավդա»-ի խմբագրությանը։

«Զգալով աներևակայելի շահագործման ամբողջ ծանրությունը... ընկ(երական) ողջույն ենք հղում ընկ(եր) պետերբուրգցիներին։ Մենք որոշել ենք ըստ հնարավորության սիստեմատիկորեն աջակցել նրանց»։ Այնուհետև նրանք հայտնում են «իրենց խոր զայրույթն ու բողոքը այն լիբերալ թերթերի («Ռեչ» և «Սևերնոյե սլովո») դեմ, որոնք իրենց էջերում հայտարարություններ զետեղեցին և դրանով օժանդակեցին շտրեյկբրեխերների հավաքագրմանը... «Մենք պետք է լավ գիտենանք, թե պարոնայք լիբերալներն ինչպես են գնահատում ժողովրդի շահերը և մանավանդ բանվորների շահերը»[1]։

Համառոտակի բացատրենք, թե ինչից առաջացավ այդ նամակը։ Պետերբուրգի մի շարք ձեռնարկությունների բանվորները, Լենայի դեպքերի կապակցությամբ 1912 թ. մայիսի վերջերին գործադուլ հայտարարելով ի նշան բողոքի, միաժամանակ կապիտալիստներին ներկայացրին տնտեսական պահանջներ և հայտարարեցին, որ աշխատանքի չեն անցնի, մինչև որ այդ պահանջները լիովին չբավարարվեն։ Այն ժամանակ ձեռնարկատերերը բանվորներին հայտարարեցին աշխատանքից ազատված և «Ռեչ» ու «Սևերնոյե սլովո» լիբերալ թերթերում հայտարարություն զետեղեցին բանվորների նոր հավաքագրման մասին։ Հենց այդ կապակցությամբ էլ բողոք է հայտնվում վերոհիշյալ նամակում, որը հետո ընկավ ժանդարմերիայի ձեռքը։ Պարզելով այդ նամակի հեղինակների անձնավորությունը, Կովկասի պահնորդական բաժանմունքի պետ դնդապետ Պաստրյուլինը 1912 թ. նոյեմբերի 2-ին «հույժ գաղտնի» հայտնում է ոստիկանության դեպարտամենտին, թե այդ հեղինակներն են՝ Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչ Լևոն Սուքիասովը և Նախիջևանի գավառի Յարինջա գյուղի բնակիչ Անանովը («նա ինքն էլ Իսահակ Աբրամովիչ Օհանով»), որոնք «Զինգեր» մեքենաների ընկերության մեխանիկներն են[2]։

Բանվորների համարձակ ելույթները ցարական կառավարության վայրի կամայականության դեմ չէին կարող ռևոլյուցիոնացնող ազդեցություն չունենալ հայ գյուղացիական չքավորական մասսայի վրա։ Հենց Լենայի դեպքերին հաջորդող շրջանում էլ հայկական գյուղում ուժեղանում է ագրարային շարժումը, որն օրեցօր ընդունում է ավելի սուր բնույթ։ Գյուղացիները համառ զինված դիմադրություն են ցույց տալիս իշխանության ներկայացուցիչներին։ Այսպես, 1912 թ. ամռանը Սուրմալուի գավառի Կարակոյունլու գյուղի բնա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 80, էջ 325։

[2] Նույն տեղում, էջ 348։

կիչները կտրականապես հրաժարվեցին իրենց մյուլքադարին հարկեր վճարելուց։ Վերջինը դիմեց ոստիկանության օգնությանը, բայց գյուղ եկած ստրաժնիկները հանդիպեցին գյուղացիների կազմակերպված զինված դիմադրությանը և ստիպված եղան հեռանալ գյուղից[1]։ Միևնույն ժամանակամիջոցում այդ նույն բանն էլ տեղի ունեցավ Երևանի գավառի Աղհամզալու գյուղում, Շարուր-Դարալագյազի գավառի Էնգիջա գյուղում[2] և Հայաստանի շատ ուրիշ գյուղերում։ Այդ ժամանակաշրջանում գրեթե ամենուրեք ավելի հաճախ են դառնում կալվածատիրական ու պետական հողերի բռնագրավման, անտառների հրդեհման, անտառապետների և անտառային ոստիկանության աստիճանավորների սպանությունների դեպքերը։ Օրինակ, էջմիածնի գավառի Ինաթլու գյուղի բնակիչները, բռնագրավելով «Գեչի ղալասի» կոչվող կիրճի մոտ գտնվող անտառային արոտավայրը, սաստիկ ծեծեցին այդ արոտավայրի վարձակալներին, տեղացի կուլակներ Սիրական Մկրտչյանին ու Սերգո Ղազարյանին, իսկ անտառապետ Արշակ Ալանյանին քաշ տվեցին անտառ, մտադրություն ունենալով սպանել նրան։ Բայց «դա նրանց չհաջողվեց,— ասված է էջմիածնի գավառապետի անունով պրիստավի ուղարկած զեկույցում,— որովհետև ժամանակին հասավ ոստիկանական պահակախումբը»[3]։ Անտառապետությունների աստիճանավորների հետ տեսնվող նման դատաստանները լուրջ տագնապ առաջ բերին հողագործության ու պետական գույքերի Երևան-Կարսի վարչությունում, որը շտապեց Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի, Նոր Բայազետի, էջմիածնի և մյուս անտառապետություններին ուղարկել Անտառային դեպարտամենտից ստացված շրջաբերականի պատճենը, որտեղ նշվում է, թե «արդեն նկատվում են, ինչպես 1907 թ., գյուղացիների կողմից հարձակումներ ու անտառամասերի գրավումներ, նույնպես և մահափորձեր անտառապետությունների աստիճանավորների դեմ» և «այդ փաստը» հատկապես նկատի ունենալով անցած խառնակ ժամանակների տագնապալի սիմպտոմները, արժանի է ամենալուրջ ուշադրության»...[4]։ Վերոհիշյալը հավաստելու հետ մեկտեղ, նշվում են նաև միջոցառումներ՝ պայքարը «բունտարարների» դեմ ուժեղացնելու համար։ Բայց այդ «միջոցառումներն» անզոր էին անտառների հրդեհումները, անտառային մասիվների ինքնագլուխ գրավումներն ու կտրատումը կանխելու համար։ Մեր հաշիվներով (անշուշտ, բնավ ոչ լրիվ) 1912 թ. ընթացքում տեղ է ունեցել անտառների հրդեհումների, ինքնագլուխ կտրելու և «անտառային կանոնադրության այլ տեսակի խախտումների 100 դեպք»[5]։

Այդ ժամանակ Հայաստանում գործող բոլշևիկներ Հովհաննես Սարուխանյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Արշավիր Մելիքյանը, Արսեն Մուսայելյանը և ուրիշներ, կլխավորելով աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն շարժումը, քաղաքային ու գյուղական պրոլետարիատին կոչ էին անում անողոք պայքար մղել շահագործողների դեմ։ Մի շարք վայրերում, ինչպես Զանգեզուրում և Լոռում, բոլշևիկներն աշխատանք էին տանում գյուղական չքավորությանը զինված ապստամբության նախապատրաստելու ուղղությամբ։ Օրինակ, Ջալալօղլու ընդհատակյա բոլշևիկյան խումբը Անուշավան Թումանյանի գլխա-

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 49/113, ց. 1, գ. 22, էջ 148։
[2] Նույն տեղում, էջ 195 և 297։
[3] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 133, գ. 6246, էջ 5։
[4] Նույն տեղում, գ. 6259, էջ 2։
[5] Նույն տեղում, էջ 1—23։

վորությամբ, նախապատրաստելով Ջալալօղլու և հարևան գյուղերի գյուղացիների զինված ելույթն ընդդեմ տեղական հողատերերի և նրանց հովանավորող ոստիկանության, կապ հաստատեցին հրետանային պարկի ռևոլյուցիոն տրամադրություններով համակված զինվորների Ջուբատինի ու Սավինի հետ և մտադիր էին նրանց օգնությամբ զինապահեստից դուրս բերել 40 հրացան։ Բայց այդ մտադրությունը չկատարվեց, որովհետև հրամանատարությունը, Ջուբատինին ու Սավինին կասկածելով «չարամտության» մեջ, իսկույն մեկուսացրեց նրանց։ Ինչպես հետո հայտնի դարձավ, պատմում է իր հիշողություններում հին բոլշևիկ Ա. Թումանյանը,— այդ ընկերներին ուղարկել էին կարգապահական գումարտակ, իսկ խմբի անդամներն անցան խոր ընդհատակ.— «հակառակ դեպքում մենք ևս պետք է կանգնեինք զինվորական տրիբունալի առաջ»[1]։

Ռևոլյուցիոն շարժման ալիքը Հայաստանում, որ առանձնապես աճել էր Լենայի դեպքերից հետո, շոշափեց նաև այստեղ դիսլոկացված զորամասերի զինվորներին, Կարսի, Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի և մյուս կայազորներում զինվորների մեջ եղած զայրույթի խուլ տրտունջները գնալով աճում էին և հաճախ վերածվում ինքնակալության բռնակալական կամայականությունների դեմ ուղղված բացահայտ բողոքի։ Ինչպես երևում է Վրացական ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահվող ժանդարմական զեկույցներից, հիշյալ կայազորների զինվորներից շատերի կարծիքով Լենայի ոսկեհանքերի անզեն բանվորների գնդակահարությունը ինքնակալության անզորության, նրա վերահաս կրախի արտահայտությունն է։ Իսկ Կուբինսկու 155-րդ հետևակ գնդի (շտաբ-կվարտիրան գտնվում էր Ներքին Սարիղամիշ գյուղում) շարքայիններ Վիկտոր Ստաշևսկին և Ալեքսեյ Ջումանովը, դատապարտելով Լենայի ոսկեհանքերի անմեղ բանվորների վրա կրակող զինվորներին, կտրականապես հրաժարվեցին զինվորական ծառայությունից և հեռացան իրենց ստորաբաժանումից։ 1913 թ. հունվարի 28-ին, բռնված լինելով և հետաքննության ենթարկվելով ժանդարմերիայի կողմից, նրանք հայտարարեցին, որ Ռուսաստանում տիրող կամայականությունն ու ժողովրդի կեղեքումը հարատև չեն, որ «Ռուսաստանը գտնվում է ռևոլյուցիայի նախօրյակին և որ վրա են հասնում թաղավորող տան վերջին օրերը»[2]։

Բոլշևիկները կոչ են անում ժողովրդին չնահանջել ինքնակալության ոստիկանական տեռորի առջև։ Չնայած ռեակցիայի դեռևս շարունակվող սանձարձակությանը, նրանք գրավոր ու բանավոր պրոպագանդայով աշխատավոր մասսաների առջև մերկացնում են ինքնակալության բռնակալական, հակաժողովրդական էությունը։ 1913 թ. փետրվարի 21-ին, երբ սևհարյուրակայինները տոնում էին «Ռոմանովների տան 300-ամյակը», իսկ բոլոր տեսակի դավանանքների տերտերները ժողովրդին կոչ էին անում խոնարհաբար ծունկ չոքել ցարական դահի առջև, ամբողջ Անդրկովկասում տարածվեց ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեի «Կորչեն բռնակալները, հեռու շղթաները» համարձակ բոլշևիկյան կոչը, որտեղ գրված էր Ռոմանովներ անունը կրող «շայկայի» հա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, հին բոլշևիկ Ա. Դ. Թումանյանի անձնական գործ, էջ 2։

[2] Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 2, գ. 2843, էջ 9։

կիրճ, բայց դիպուկ բնութագիրը։ «Այսպես ուրեմն, ում առջև պետք է խոնարհվի ժողովուրդն այս հիշարժան օրը,— ասված է այդ կոչում։— Արդյոք Եկատերինա 2-ի պիղծ անկողնո՞ւ, թե՞ Նիկոլայ 1-ի մտրակի ու Ճիպոտների առջև, Ալեքսանդր 3-ի բռունցքի և օղու շշի՞, թե՞ Նիկոլայ վերջինի կախաղանի և տաժանակրության առջև։ Ինչի համար պետք է ուրախանա ժողովուրդը՝ վերհիշելով Ռոմանովների տոհմին և նրա վերջին ցար Նիկոլայ Արյունոտին»[1]։ Եվ կոչի հեղինակը կծու իրոնիայով հարցնում է՝ գուցե նրա համար, որ «Նիկոլայ 2-ի անունով և հանուն Ռոմանովների շայկայի տիրապետության» «Սիբիրի խուլ տայգայում» 1912 թ. գնդակահարվեցին 500 խաղաղ անզեն բանվորներ»[2]։

Ռոմանովների տան 300-ամյակի տոնակատարությունը, որը վերածվեց իշխող դասակարգերի նենգամիտ շարախնդությանը, գոյություն ունեցող կարգի նկատմամբ ավելի մեծ ատելություն առաջ բերեց ժողովրդի մեջ, «որին ճնշում և կողոպտում են բոլոր նրանք, ովքեր թեկուզ մի փոքր իշխանություն ունեն»[3], գրում է ուսանողների կազմակերպության Կովկասյան բյուրոն, հիշյալ հոբելյանի առթիվ հրապարակած իր պրոկլամացիայում։ Հայաստանի, ինչպես և ամբողջ Ռուսաստանի աշխատավոր մասսաները չէին կարող ներել ինքնակալությանը, չէին կարող մոռանալ նրա կատարած չարագործությունները։ Ինչպես երևում է արխիվային նյութերից, այդ այսպես կոչված «հոբելյանական օրերին» հատկապես ուժեղանում և առավել մասսայական բնույթ է ստանում ազրարային շարժումը Հայաստանում։ Տեղական իշխանությունների լուրջ տագնապն էին առաջացնում Ալեքսանդրապոլի, Շուշու, Նոր Բայազետի գավառների, Կարսի մարզի մի շարք գյուղերի չքավորության համարձակ ու կազմակերպված ելույթները, չքավորություն, որը զենքի ուժով գրավում էր կալվածատիրական ու պետական հողերը, հայտարարելով, թե «հողը պետք է պատկանի նրանց, ովքեր մշակում են այն»[4]։

Լենայի դեպքերը, «կուտրելով ժողովրդական լռության սառույցը», ռևոլյուցիոնացնող ազդեցություն ունեցան հայ հասարակության բոլոր առաջավոր խավերի, այդ թվում Հայաստանի, մասնավորապես Էջմիածնի, Իգդիրի, Կաղզրվանի, Կարսի և այլ վայրերի ուսումնական հաստատությունների սովորողների վրա։ Լենայի արյունոտ դեպքերն առաջավոր ուսանող երիտասարդությանը հարկադրեցին ավելի քննադատաբար վերաբերվել ուսումնական հաստատություններում գոյություն ունեցող կարգերին, հասարակական գիտությունների դասավանդմանը։

1913 թ. վերջերին հուզումներ սկսվեցին Էջմիածնի Ճեմարանի ուսանողների մեջ։ Դրա գլխավոր պատճառներից մեկը ուսանողների նյութական ծանր դրությունն էր։ Վերջիններս բացեիբաց հայտարարում են, որ Ճեմարանում բուն են դրել խաբեբաներն ու հափշտակիչները, որոնք յուրացնում են ուսանողների համար նախատեսված միջոցների զգալի մասը, իսկ իրենց ուսանողների հետ չափազանց վատ են վարվում։

Տեսուչը համաձայնվեց բավարարել Ճեմարանի սաների տնտեսական պահանջների մի մասը. նրանց համար ձեռք բերվեց հագուստեղեն, ոտնաման,

[1] Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 3, գ. 637, էջ 74։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 67։
[4] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 4937, էջ 44։

ավելացրին նրանց տրվող ամսական դրամական նպաստը 15-ից 20 ռուբլի։ Սակայն հուզումները Ճեմարանում չէին դադարում։ 1914 թ. հունվարի 10-ին երեք բարձր լսարանների ուսանողներն իրենց պատվիրակների միջոցով տեսչին բողոք հայտնեցին հիվանդ ուսանողներին անբավարար խնամելու և ուսանողական ճաշարանում տրվող անորակ սննդի պատճառով։ Պատշաճ պատասխան չստանալով նրանից, հունվարի 11-ին լսարանցիները հայտարարեցին մեկշաբաթյա դասադուլ և իրենց պատվիրակներին ուղարկեցին ամենայն հայոց Կաթողիկոսի մոտ, խնդրելով տեսչի պաշտոնում նշանակել այլ անձնավորություն[1]։ Ճեմարանում ստեղծված դրությունը,— գրում էր Երևանի նահանգապետ Տիզենհաուզենը Վորոնցով-Դաշկովին,— «Նորին սրբազանությանը դրդեց հրատարակել մի կոնդակ, որով Ճեմարանի երեք բարձր լսարանների դասատուներին ավտոնոմ իրավունք է վերապահված Ճեմարանի տեսչի պաշտոնում ինքնուրույն կերպով ընտրել և նշանակել այնպիսի անձնավորություն, որը կարողանար համապատասխանել այդպիսի նշանակմանը»[2]։

Մեկնաբանելով Էջմիածնի հոգևոր Ճեմարանում տեղի ունեցող դեպքերը, Արշավիր Մելիքյանի ղեկավարությամբ Երևանում հրատարակվող բոլշևիկյան լեգալ «Խոսք» թերթը նշում է, որ դրանց հիմնական պատճառը ոչ թե ուսանողների դժգոհությունն է ադմինիստրացիայի առանձին ներկայացուցիչներից, այլ «Ճեմարանում գոյություն ունեցող կարգերից»[3]։

Միևնույն ժամանակ «Խոսք»-ն իրավացիորեն նշում է, որ «Հայ հոգևորականությունը, մանավանդ նրա մի փոքր մասը, որը ներկայումս տեր ու տնօրեն է հանդիսանում մեր ներքին գործերի, անկարող է բարեփոխել այդ հաստատությունը, այն ձևով, ինչ ձևով մենք ենք ցանկանում»[4]։

Ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Լենայի դեպքերն արձագանք էին գտնում հայ իրականության մեջ։ 1914 թ. մարտի 19-ին դադարեցվեց Ալավերդու պղնձագործների երկուհազարանոց կոլեկտիվում։ Գործադուլավորների հիմնական պահանջներն էին՝ 8-ժամյա աշխատանքային օրը, բանվորներից տեսուչներ նշանակելը, բանվորների ընակարանային-կենցաղային պայմանների բարելավումը[5]։ Այդ պահանջների նախագիծը նախօրոք մշակվել էր մի խումբ առաջավոր բանվորների կողմից և, ինչպես Բորչալուի գավառապետ Գավրիլովը զեկուցում է փոխարքա Վորոնցով-Դաշկովին, «երեք օր առաջ քննարկվել է փոքրաթիվ պարագլուխների կողմից, ընդ որում նրանցից մեկը... գնացել է Թիֆլիս՝ պատշաճ ցուցումներ ստանալու համար»[6]։ Այսպիսով, Ալավերդու պղնձագործների նկարագրվող գործադուլը տարերային չէր, այն նախապատրաստվել էր «փոքրաթիվ պարագլուխների», այսինքն՝ գործարանի բոլշևիկյան բջիջի անդամների կողմից, մի բջիջ, որն այն ժամանակ այստեղ գործում էր փորձված ռևոլյուցիոներ Սիմոն Էվոյանի ղեկավարությամբ։ Վերջինս անմիջական սերտ կապ էր պահպանում Թիֆլիսի ղեկավար բոլշևիկյան կոլեկտիվի հետ[7]։

---

1 Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 49/113, ց. 1, գ. 34, էջ 88։
2 Նույն տեղում, էջ 112։
3 «Խոսք», № 6, 8 փետրվարի, 1914, Երևան։
4 Նույն տեղում։
5 Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 34, գ. 665, էջ 10։
6 Նույն տեղում, էջ 8։
7 Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 15, գ. 4, էջ 126։

Գործադուլը տևեց երկու օր։ Չնայած նրան մասնակցում էր գործարանի բանվորների միայն մի մասը, այնուամենայնիվ նա հարուցեց ինչպես դիրեկցիայի, այնպես էլ ժանդարմերիայի լուրջ երկյուղը։ Գործադուլավորներին հնազանդեցնելու համար պղնձաձուլական գործարանի և հանքերի տերիտորիան մտցվեցին տեղական ոստիկանական ստրաժնիկներ, մի զինված խումբ, որ ժամանել էր Շուլավերից՝ գավառապետ Գավրիլովի և այդ դեպքերի կապակցությամբ Թիֆլիսից եկած ոստիկանական աստիճանավորների ու Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետի օգնական փոխգնդապետ Ռեդրովի գլխավորությամբ։ Գործադուլավորների դեմ մղվող պայքարի գործողությունները ղեկավարում էր Գավրիլովը։ Նա ղեկավարվում է գործադուլային շարժման դեմ պայքարելու վերաբերյալ 1913 թ. հուլիսի 28-ի շրջաբերականով, որ նրան ուղարկել էր Թիֆլիսի նահանգապետը հետևյալ հղումով.

«Ներկա շրջաբերականը (պատճենը)... հղում եմ Ձերդ բարեծնությանն ի ղեկավարություն և Ալավերդու գործարաններում տեղի ունեցող գործադուլի գործի կապակցությամբ Ձեր կողմից կիրառվող միջոցառումներն այնտեղ նշված պահանջների հետ համաձայնեցնելու համար։ 1914 թ. մարտի 20-ի ցերեկ»[1]։ Սակայն գավառապետը ոչ միայն հետևում է ոստիկանության դեպարտամենտի ցուցումներին, այլև նախաձեռնություն է ցուցաբերում (որը, ի դեպ ասած, խիստ համապատասխանում էր շրջաբերականի պահանջներին), կայուդադրելով իր ստորադրյալներին զենքը պահել «մարտական պատրաստ վիճակում»։ Դրա հետ մեկտեղ նա հասկանում էր, որ միայն ռեպրեսիվ միջոցներով բանվորներին չի կարելի հնազանդեցնել և գործարանի դիրեկտոր Ռոբենին անձնարարեց որոշ զիջումներ անել, որին և նա համաձայնեց։

Մարտի 21-ին բանվորները գործադուլը դադարեցրին։ Այդ կապակցությամբ օկրուգային ինժեներ Յեյալին, Ռեդրովն ու Գավրիլովը գավառապետին հեռագրում են. «Գործադուլը լիկվիդացված է, ներկայացված տնտեսական պահանջների մի մասը բավարարված է»[2]։

Լենայի արյունոտ սպանդում զոհված իրենց դասակարգային եղբայրակիցների հիշատակը մեծարում են ոչ միայն Հայաստանի բանվորներն ու գյուղական չքավորությունը, այլև հայ բաղկալանավոր-ռևոլյուցիոներները, որոնք, չնայած բանտային դաժան ռեժիմին, բացեիբաց հայտարարում են իրենց համերաշխությունը ռուս և մյուս ազգերի պրոլետարիատի հետ։ Ինչպես Բաքվի նահանգի ժանդարմական վարչության պետը 1914 թ. ապրիլի 5-ին ոստիկանության դեպարտամենտին հաղորդում է, «...Բաքվի բանտի բաժանմունքում 24 բաղաքական կալանավոր ի նշանավորումն Լենայի դեպքերի տարեդարձի, հայտարարեցին և անցկացրին միօրյա հացադուլ»[3]։ Զեկույցին կցված ցուցակում ուրիշների թվում նշված են՝ Համբարձում Օսիպովի Ասատուրովը, Սմբատ Մեջլումովի Կարատաշևը և Եղիա Մարկովի Տեր-Օվանեսովը, որոնք դատապարտվել են Շուշու, Ղազախի և Շամախու գավառների գյուղացիական մասսաների մեջ ծավալած ռևոլյուցիոն գործունեության, գյուղացիներին «հակակառավարական հանցավոր ելույթների» դրդելու համար[4]։

---

[1] Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 34, գ. 655, էջ 5։
[2] Նույն տեղում, էջ 5։
[3] Ադրբեջանական ՍՍՌ ՊԿՊԱ, . 46/5 գ, ց. 20, գ. 48, էջ 9։
[4] Նույն տեղում, էջ 1։

1914 թ. ապրիլի կեսերին Սարդիս Կասյանի կողմից ռուսերեն գրված և Մելիք Մելիք-Աբազյանի կողմից հայերեն թարգմանված Մայիսմեկյան պրոկլամացիայում բոլշևիկները, մեկ անգամ ևս հայ պրոլետարիատին հիշեցնելով ցարիզմի արյունոտ չարագործությունների մասին, կոչ են անում նրան համերաշխություն պահպանել Համառուսաստանյան պրոլետարիատի հետ, միաձուլվել և կազմել «մի ահարկու ուժ՝ ցարական խայտառակ միապետությունը երկրի երեսից ջնջելու համար»[1]։

Բոլշևիկների կոչը ջերմ արձագանք է գտնում Հայաստանի աշխատավոր մասսաների մեջ։ Արխիվային փաստաթղթերից և քննարկվող ժամանակաշրջանի պարբերական մամուլի նյութերից կարելի է բազմաթիվ օրինակներ ու փաստեր բերել հայ բանվորների, գյուղացիության, առաջավոր ինտելիգենցիայի և Հայաստանի տերիտորիայում գտնվող զորամասերի զինվորների շրջանում շարունակ աճող հուզումների մասին։

Բռնկեց առաջին համաշխարհային պատերազմը, որից օգտվելով, ցարական կառավարությունը, ինչպես ամենուրեք Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում, սկսեց ջախջախել բոլշևիկյան կազմակերպությունները, դաժան դատաստան տեսնել ռևոլյուցիոն պրոլետարիատի ու գյուղացիության հետ, նրանց մի մասին բանտ նետեց, տաժանակրության դատապարտեց, իսկ մյուս մասին մոբիլիզացրեց և քշեց ռազմաճակատի առաջին գիծը։

Պատերազմը ժամանակավորապես խափանեց ռևոլյուցիոն նոր վերելքը, որն առանձնապես ուժեղ թափով սկսել էր աճել Լենայի արյունոտ դեպքերից հետո։

Չնայած այն բանին, որ պատերազմը ընդհատեց ռևոլյուցիոն վերելքը, այնուամենայնիվ 1910 թ. սկսված և Լենայի դեպքերից հետո առանձնապես ուժեղացած ռևոլյուցիոն ուժերի հարձակումը նշանակալի ներդրում էր մեր երկրի պրոլետարիատի պայքարի պատմության մեջ։

---

1 Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 2741, էջ 256։